



Քաղվածք № 5

**Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի)
1-ին գումարման 7-րդ նստաշրջանի 2-րդ նիստի արձանագրությունից
29 մայիսի 2018 թ.**

Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) երկրորդ գումարման խորհրդարանական ընտրությունների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Որոշեցին՝

ա) Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) երկրորդ գումարման խորհրդարանական ընտրությունները անցկացնել 2018 թվականի աշնանը:

բ) Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) երկրորդ գումարման խորհրդարանական ընտրությունների անցկացման կոնկրետ ամսաթիվն ու վայրը որոշելու է Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահությունը, եւ կնախապատրաստի Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահի համապատասխան Հրամանագրի նախագիծ:

գ) հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) երկրորդ գումարման խորհրդարանական ընտրությունների նախապատրաստական աշխատանքների ծրագիրը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ - 51, դեմ - 0, ձեռնպահ - 0:

Որոշումն ընդունված է միաձայն:

Արմեն Տեր-Սարգսյան

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Սաիդա Օհանյան

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 7-րդ նստաշրջանի քարտուղար

29.05.2018 թ., Երեւան

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողով
Խորհրդարան